State of California | Health and Human Services

DHCS

CalMediConnect
Your choice for complete care

▶W-◀

JOHN SAMPLE
1234 SAMPLE STREET
ADDRESS 2
ANYTOWN CA 90000

XX/XX/XXXX

Կարևոր տեղեկություն

Դուք ստանում եք այս նամակը, քանի որ ունեք **Ե՛Վ** «Medicare», **Ե՛Վ** «Medi-Cal»: Փոխվում է այն ձևը, որով Դուք բուժսպասարկում եք ստանում: Այժմ Դուք ավելի մեծ ընտրություն ունեք Ձեր առողջապահական կարիքները բավարարելու հարցում:

Ի՞նչ է «Cal MediConnect»-ի ծրագիրը:

«Cal MediConnect»-ի ծրագիրը «Medicare»-ի/«Medi-Cal»-ի ծրագիր է, որը կառավարում է «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները: «Cal MediConnect»-ի որևէ ծրագրի անդամագրվելով՝ Դուք շարունակում եք առանց լրացուցիչ ծախս կատարելու ստանալ ինչպես Ձեր «Medicare»-ի, այնպես էլ «Medi-Cal»-ի նպաստները, բայց պետք է օգտվեք «Cal MediConnect»-ի Ձեր սպասարկողների ծառայություններից: Կարող եք նաև փոխադրման և ակնաբուժական լրացուցիչ նպաստներ ստանալ:

Ծրագրերի ընտրության ի՞նչ տարբերակներ կան իմ տրամադրության տակ:

Շուտով Դուք լրացուցիչ տեղեկություններ կստանաք այն ծրագրերի մասին, որոնք կարող եք ընտրել: Դուք կարող եք «Cal MediConnect»-ի որևէ ծրագիր ընտրել կամ մնալ սովորական «Medicare»-ում: Եթե Դուք որոշեք սովորական «Medicare»-ում մնալ, ապա պետք է «Medi-Cal»-ի որևէ ծրագիր ընտրեք՝ «Medi-Cal»-ի Ձեր նպաստները ստանալու համար: Եթե Դուք ոչինչ չընտրեք, մենք ինքներս «Cal MediConnect»-ի ծրագրերից մեկը կընտրենք Ձեզ համար: Դուք շարունակում եք օգտվել այն նպաստներից և ծառայություններից, որոնցից այժմ օգտվում եք, իսկ «Cal MediConnect» ծրագիրն աշխատում է Ձեր բժիշկների և սպասարկողների հետ:

Սա առաջին նամակն է Ձեր տրամադրության տակ եղած ընտրության նոր տարբերակների մասին: Շուտով Դուք մի երկրորդ նամակ կստանաք, որը լրացուցիչ տեղեկություններ կպարունակի Ձեր տրամադրության տակ եղած ընտրության տարբերակների մասին: Դուք կարող եք «Cal MediConnect»-ի Ձեր շրջանում գործող որևէ ծրագիր ընտրել կամ մնալ սովորական «Medicare»-ում:

Ձեր ընտրության տարբերակներն են՝

1. **Անդամագրվել «Cal MediConnect»-ի որևէ ծրագրի:** Այդ առողջապահական ծրագրերը վճարում են և՛ «Medicare»-ի, և՛ «Medi-Cal»-ի ծառայությունների համար: Եթե Դուք «Cal MediConnect»-ի որևէ ծրագրի անդամագրվեք, ապա «In-HomeSupportive Services»-ի

W

(IHSS), «Multipurpose Senior Services Program»-ի (MSSP), «Community-Based Adult Services»-ի (CBAS) և ծերանոցային խնամքի ծառայությունները «Cal MediConnect»-ի միջոցով կստանաք: Նրանք վճարում են նաև ակնաբուժական ծառայությունների և փոխադրման համար: «Cal MediConnect»-ի ծրագիրը՝ Ձեզ, Ձեր բժիշկների և սպասարկողների հետ համագործակցելով, հոգ կտանի, որ Դուք ստանաք Ձեզ անհրաժեշտ բուժօգնությունը:

2. **Անդամագրվել «Program of All-Inclusive Care for the Elderly»-ին (PACE):** Եթե Դուք 55 տարեկան կամ ավելի մեծ եք և ավելի բարձր մակարդակի խնամքի կարիք ունեք, որպեսզի կարողանաք Ձեր տանն ապրել, հնարավոր է, որ Դուք իրավասու լինեք PACE-ում ընդգրկվել: PACE-ը տրամադրում է «Medicare»-ի և «Medi-Cal»-ի բոլոր նպաստները, բացի այդ՝ որոշ լրացուցիչ ծառայություններ, որոնք օգնում են քրոնիկական հիվանդություններ ունեցող տարեց անձանց շարունակել իրենց տանն ապրել:
3. **Անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի: Ձեր «Medicare» կմնա նույնն, ինչ հիմա է:** Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամագրվեք, ապա կշարունակեք օգտվել «Medicare»-ի Ձեր ներկա բժիշկների և հիվանդանոցների ծառայություններից և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները, օրինակ՝ «In-Home Supportive Services»-ի (IHSS), «Multipurpose Senior Services Program»-ի (MSSP), «Community-Based Adult Services»-ի (CBAS) և ծերանոցային խնամքի ծառայությունները «Medi-Cal»-ի միջոցով կստանաք:

Ինչպե՞ս է «Cal MediConnect»-ի ծրագիրն օգնում ինձ:

«Cal MediConnect»-ի ծրագիրն օգնում է Ձեզ, քանի որ «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները համատեղվում են և ավելի արդյունավետ են գործում Ձեզ համար:

Ձեր բժիշկները, դեղագործները, IHSS-ը, CBAS-ը, MSSP-ը և այլ սպասարկողները համատեղ ջանքերով բուժսպասարկում են տրամադրում Ձեզ, և ծրագիրը համակարգում է այն հարցը, թե կոնկրետ ով պետք է օգնի Ձեզ, որպեսզի Դուք ստանաք Ձեզ անհրաժեշտ բուժօգնությունը և ծառայությունները: Դա կոչվում է «բուժսպասարկման համակարգում»:

Այժմ ես ի՞նչ պետք է անեմ:

- Ձեր տրամադրության տակ եղած ընտրության տարբերակների մասին խոսեք որևէ մեկի հետ, ով ծանոթ է Ձեր առողջական խնդիրներին, օրինակ՝ Ձեր ընտանիքի անդամների, բժիշկների կամ ծերերին օգնություն տրամադրող Ձեր տեղական կենտրոնի և/կամ «ինքնուրույն կյանք վարելու կենտրոնի» հետ:
- Ստուգեք Ձեր փոստարկղը. մոտ մեկ ամսից Դուք փաթեթ եք ստանալու «Health Care Options»-ից:
- Եթե ցանկանում եք Ձեր տրամադրության տակ եղած ընտրության տարբերակների մասին խոսել առողջության ապահովագրման հարցերով որևէ խորհրդատուի հետ, զանգահարեք **«California Health Insurance Counseling & Advocacy Program (HICAP)»՝ 1-800-434-0222** հեռախոսահամարով:
- Եթե այս նամակը Ձեզ անհրաժեշտ է որևէ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, օրինակ՝ խոշորատառ տպագրությամբ, ձայնագրված կամ Բրայլի այբուբենով, կամ եթե Ձեզ օգնություն է հարկավոր այս նամակը հասկանալու հարցում, խնդրում ենք զանգահարել՝

Health Care Options
1-844-580-7272 • TTY: 1-800-430-7077
Երկուշաբթի - ուրբաթ՝ ժամը 8-ից 17-ը:
www.HealthCareOptions.dhcs.ca.gov

Cal MediConnect Health Plan Options and Changes in your Medi-Cal Health Plan

Who to Call for Help or More Information In Los Angeles County

Call the Participating Health Plans Below:

Health Net
☎ 1-888-788-5395

L.A. Care
☎ 1-888-522-1298

CareMore
☎ 1-888-350-3447

Care 1st
☎ 1-888-592-7168

- To see if your doctors and other health providers are in the Plan's network
- To find a new doctor or other provider
- To make sure your current medications are covered
- If you need help with health issues
- If you need transportation to get to your appointments
- If you need more help to stay healthy and at home

Health Insurance Counseling and Advocacy Program (HICAP) ☎ (213) 383-4519

- To learn more about your Medicare options
- For free, individual counseling help in deciding which Medicare and Medi-Cal options best meet your needs

Health Care Options ☎1-844-580-7272 TTY: 1-800-430-7077

- For information and help to enroll in, change or leave a health plan

Cal MediConnect Ombudsman ☎ 1-855-501-3077 **(available after April 1, 2014)**

- If you have a complaint or problem that your Health Plan has not been able to resolve to your satisfaction

Medicare ☎ 1-800-633-4227 TTY 1-877-486-2048 Visit www.medicare.gov

- For information about the Health Plan options in your county
- To check the prescription drugs covered